ւորելու համար դուրս էր եկել գիւղի ամբողջ բնակչութիւնն ու գաղթակա-նութիւնը։ Ժողովրդի առջևից գնում էին Սասունի դիվիզիոնի ձիաւոր հարիւրեակը Մուշեղի գլխաւորութեամբ, տեղական վաշտը և Եապոնը մի քանի ձիաւորներով։ Ապա գալիս էին որբերը՝ հայկական և ամերիկեան դրօշակներով։ Որբերին հետևում էր հոգևորականութիւնը՝ խաչ ու խաչ-վառով և աղ ու հացով։ Տեսարանը վերին աստիճանի սրտառուչ էր. հրդեհի ու փոթորիկների բովից անցած ժողովուրդը ընդունում էր իր հարազատ իշխանութիւնը...

Մայիս 12-ին զօրքերն առաջ շարժուեցին դէպի Շարուր-Նախիջևան։ Նոյն օրը, փոխ-վարչապետ Խատիսեանը, զօր. Դևին, Դրօն և Գ. Վարշամեանը առաջին գնացքով Երևանից մեկնեցին Նախիջևան։ Նախիջևանցիները, սկզբում, մերժեցին ճանաչել Հայաստանի իշխանութիւնը, բայց զօր. Դևի կտրուկ պահանջի վրա տեղի տուին և ընդունեցին Գ. Վարշամեանի ընդհանուր նահանգապետութիւնը։ Մայիս 20-ին Նախիջևան մտան և հայկական զօրքերը։

Այսպիսով, ապրիլ-մայիս ամիսներին կատարուեց Ռուսահայաստանի ամբողջացման գործը. հայկական զօրքերը կանգնած էին Ջուլֆայում, Զանգիլում և Կարաուրգանում։

Հայկական շրջանների գրաւման հետ և դեռ առաջ տեղից շարժուեց և գաղթականութիւնը։ Թիւրքերի հեռանալու լուրը էլեկտրական արագութեամբ տարածուեց երկրի բոլոր մասերում և աննկարագրելի ցնծութիւն առաջ բերեց ամէն տեղ։ Սկսուեց տարերային մի շարժում։ Առանց սպասելու կառավարութեան կարգադրութեան, առանց նոյնիսկ ճշտելու լուրի ճշտութիւնը, գաղթականութիւնը ուղղուեց թափով դէպի սահման։ Էջմիածնում ու Ղարաքիլիսայում կուտակուեցին ահագին բազմութիւններ։ Եւ որովհետև դանդաղում էին պարպել գրաւած վայրերը, գաղթականութեան համար ստեղծուեց անտանելի կացութիւն — չաբաթներով մնում էին բաց երկնքի տակ, ենթակայ սաստիկ ցրտերի կամ անձրևների։ Եւ չնայած դրան, ամէն օր հասնում էին նորանոր խմբեր՝ սայլերով, եզներով, ֆուրգոններով, ոտով։ Մասնաւորապէս անհամբեր էին սուրմալուեցիները, զամարլուեցիներն ու սարդարապատցիները։ Միայն Էջմիածնի շրջանում խռնուել էր մօտ 140,000 գաղթականութիւն։

Կառավարութեան ճիգերը՝ կազմակերպելու և ծրագրուած ձև տալու այդ հոսանքին՝ առանձին յաջողութիւն չունեցան։ Տարերքը աւելի ուժեղ էր։ Բայց և այնպէս, կարելի եղաւ, որոշ չափով, մեղմացնել գաղթականութեան տառապանքը և, հնարաւորութեան սահմաններում, կազմակերպուած ձև տալ վերադարձի գործին։ Ներքին գործոց նախարարութիւնը, առաջին հերթին, յատկացրեց մէկ միլիոն ռուբլի գաղթականութեան սնունդ ու դեղօրայք հասցնելու համար, իսկ Հայաստանի Խորհրդի գաղթականական յանձնաժողովը հանեց հետևեալ որոշումները.